

ՊԱՏՄԱ-ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

ԹՈՎՄԱ ՄԵԾՈՓԵՑՈՒ ՆՈՐԱՅԱՅՏ՝ Ս. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԱԻԵՏՄԱՆ ՆԱԽԱՏՈՆԱԿԻ ՃԱՌԸ

Սիրով՝ Թամար Տասնապետեանին

Թովմա Մեծոփեցուն վերաբերող ձեռագրական յիշատակություններն արձանագրելու ընթացքում նկատել էինք Նոր Զուղայի՝ Դաւրէժի Ս. Մինաս եկեղեցու Հ^ր 434 (ցուցակի՝ 237) Յայսմաւորքի 629^ր էջի ստորին լուսանցում առկայ հետեւեալ գրառումը. «Այս ճառս նոր է արարեալ մեծ վարդապետն Թովմա Մեծոփեցի»¹: Սպահանի Դաշտ գիւղում խոջա Սինաքարիմի պատուէրով 1615 թ. Սարգիս կրօնաւոր գրչի գրած ձեռագրի նկարագրութեան մէջ սա տպագրուած է որպէս գրչի յիշատակագրութիւն, որ ճիշտ չէ, այսինքն՝ այն ԺԵ. դարում արուած բնագրական ծանօթութեան վերարտադրութիւն է: Մակայն այս Յայսմաւորքի նկարագրութեան մէջ նրա պարունակած նիւթերը ցանկուած չեն, ուստի եւ անհնար էր հասկանալ, թէ ո՞ր ճառի կամ սրբի վարքի մասին է խօսքը:

Վերջերս նոյն գրառումը նկատեցինք Մաշտոցեան Մատենադարանի Մայր ցուցակի դեռեւս անստիպ մասում՝ Հ^ր 1511 ձեռագրի² (1471 թ.) նկարագրութեան մէջ. «239. 432^ր-5ա «Ահկի (=Արեգի) ի ԻԹ. եւ Ապրիէլ ի Զ. Նախատանակ Աւետեաց սուրբ Աստուածածնին, զոր երկնային դասք հրեշտակացն տաւնեցին - Պարտ է գիտել ամենայն քրիստոնէից ազգաց, զի Արարիչն ամենեցուն Հայր Աստուած կամեցաւ հաշտել ընդ Ադամայ...» (434^ր) Յայսմ աւուր վկայաբանութիւն Սրբոյն Բասիմոսի... * 432^ր «Ձայս ճառս նոր է արարեալ Մեծ Վարդապետն Թովմա Մեծոփեցի» (քաղուածքիս զխատառերը՝ ըստ ձեռագրի):

Նոր Զուղայի ձեռագրի նման՝ այս ծանուցումը եւս գրուած է էջի ստորին լուսանցում, այսինքն՝ վերաբերում է 432^ր-4^ր էջերը բռնող՝ Աստուածածնի Աւետեաց նախատանակին ընթերցուելիք ճառիմ³, որի՝ Մեծոփեցու գրչին պատկանելը, այսպիսով, վկայուած է երկու՝ 1471 եւ 1615 թթ. գրուած ձեռագրերի լուսանցային ծանուցումներով եւ որն արձանագրուած չէ Լ. Խաչիկեանի տքնաջան աշ-

¹ Տե՛ս Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Զուղայի Ամենափրկիչ վանքի, հտ. Ա., Կազմեց Սմբատ Տէր-Աւետիսեան, Վիեննա, 1970, էջ 368 (այսուհետեւ՝ Յուցակ Նոր Զուղայի, Ա.):

² Յայսմաւորքի Գրիգոր Ծերենցի խմբագրութեան յղուող օրինակն է. բովանդակութիւնը լիովին ցանկուած է, միւս օրինակները նկարագրում են սրա հետ համեմատելով՝ բնագրերի՝ սրա մէջ ստացած կարգային համարների հետ ամէն առանձին ձեռագրի մէջ նոյն նիւթի զբաղեցրած էջահամարները նշելով:

³ Ծանուցումս կապ չունի «Յայսմ աւուր վկայաբանութիւն սրբոյն Բասիմոսի» (434^ր-5ա) նիւթի հետ:

խատանքի շնորհիւ կազմուած՝ նրա աշխատութիւնների ցանկում⁴, այսինքն՝ սա Մեծովեցու մինչ այժմ անյայտ, եւ անտիպ⁵ մի նոր գործ է:

Թովմա Մեծովեցու «Պատմագրութիւն եւ Նամականի» խորագրով հատորի պատրաստման մեր ծրագիրը⁶ հանգամանքների թելադրանքով վերջերս ընդլայնուեց. որոշեցինք ներառել նաեւ հեղինակի փոքրածաւալ երկերը եւ գիրքը խորագրել «Մատենագրութիւնք»: Այս տեսանկիւնից նորայայտ ճառի՝ Մեծովեցուն պատկանելը հաստատող երկու ձեռագրի վկայութիւնը եւ բնագիրը նրանցից ընդամենը մէկով ունենալն անբաւարար դիտեցինք, ուստի եւ արեցինք ճիշտ նոյնը, ինչ արել ենք մեր հեղինակի յայտնաւորային նախորդ գործը՝ երգասաց Յովհաննէս Խլաթեցու վկայաբանութեան բնագիրը պատրաստելու համար⁷, այսինքն՝ մէկ առ մէկ թերթեցինք Յայտնաւորքի Գրիգոր Ծերենցի խմբագրութեանը պատկանող մատենադարանեան շուրջ 270 ամբողջական ձեռագիր, որոնցից եւս տասնչորսում Ապրիլի 6ի ներքոյ գտանք մեզ հետաքրքրող ճառը⁸:

Իսկ Մեծովեցու հեղինակութիւնը հաստատող եւ նոր՝ ծիսակարգային մանրամասներ հաղորդող լուսանցային ծանուցում-վկայութիւնը գտանք եւս մէկ՝ ժամանակագրորէն ամենահին եւ, որ առաւել կարելոր է՝ Մեծովեցու կենդանութեան ժամանակ՝ 1438 թ. գրուած Ա՝ ՀՊ 4517 ձեռագրում. «Այս ճառս նոր է, Մեծ վարդապետին է արարեալ՝ Թովմայի Մեծովեցոյն. կարդայ՝ եւ Բ. (2) աւուրս զխորհրդնաճառ ասայ՝ իւր սարօքն, զի նախատօնակ է Աւետեաց Աստուածած-

⁴ Տե՛ս **Թովմա Մեծովեցի**, Պատմագրութիւն, Աշխատասիրութեամբ Լեւոն Խաչիկեանի, Երեւան, 1999, էջ ԼԵ-ԳԴ. (այսուհետեւ՝ Մեծովեցի, Պատմագրութիւն), նոյնը՝ Լեւոն Խաչիկեան, Աշխատութիւններ, հտ. Գ., «Նաիրի», Երեւան, 2008, էջ 667-707: Հեղինակի բնագրում այս ուսումնասիրութեան խորագիրն է. «Թովմա Մեծովեցու մատենագրութիւնը», 1999ի տպագրութեան խմբագիր Արծրունի Սահակեանն առանց որեւէ բացատրութեան այն դարձրել է բովանդակութեան անյարիր՝ «Գեանքն ու գործը», որ, ցաւօք, մեքենաբար կրկնուել է նաեւ 2008ի հրատարակութեան մէջ:

⁵ Պարտաւոր էինք պարզել, թէ ճառս նախկինում երբեւէ տպագրուե՞լ է արդեօք. Աստուածանին վերաբերող հսկայ գրականութեան եւ նոյնչափ հարուստ մեր մատենագրութեան մէջ երկարատեւ փնտրտութիւն անելու փոխարէն դիմեցինք հարցի մասնագէտին՝ մարեմաբան Թամար Տասնապետեանին. Հոկտեմբերի 25ի իր նամակով նա յայտնեց, որ մեր խնդրոյ առարկայ ճառի խորագիրը եւ սկսուածքն իրեն անծանօթ են:

⁶ Տե՛ս մեր Թովմա Մեծովեցու երգասաց Յովհաննէս Խլաթեցու վկայաբանութիւնը (†1438).- «Էջմիածին», 2008/Բ., էջ 68:

⁷ Նոյն տեղում, էջ 69:

⁸ Պարզուած բոլոր 15 ձեռագրերը ստորեւ թուարկել ենք ժամանակագրական կարգով եւ համեմատութեան համար գործածուած Ա-Գ պայմանանիշերով. համառոտութեան համար մեր շարադրանքի մէջ այս տառերն ըստ հարկի գործածելու ենք՝ նրանցով նկատի ունենալով ձեռագրերը: Յայտնաւորքի մասնական (թերի) օրինակները եւ Ժողովածոների մէջ «Ի Յայտնաւորաց» բնորոշում ստացած մասերը չենք ստուգել, ուստի Մատենադարանում ճանիւ նոր օրինակների յայտնաբերումը չի բացառուում, սակայն մեր ունեցած ձեռագրերի որակի հիման վրայ գրեթէ վստահ ենք, որ նոր օրինակներով մեր կազմած բնագրի պատկերն էապէս փոխուել չի կարող:

նին» (458ա):

Ճառի՝ Մեծոփեցու հեղինակությունը լինելու տեղեկության արժանահաւատության առումով կարելու է թէ՛ հնագոյն Ա եւ թէ՛ Դ Հ¹⁰ 1511 օրինակների գրչության տեղի՝ միջավայրի խնդիրը:

Բնականաբար, առանձնակի կարեւորություն ունի Մեծոփեցու կեանքի օրօք գրուած Ա օրինակը: Ըստ Մատենադարանի համառօտ ձեռագրացուցակի՝ նրա գրչության վայրն անյայտ է⁹: Լ. Խաչիկեանը յենուել է կորսուած գլխաւոր յիշատակարանի հիմնական տուեալների՝ ԺԸ. դարում արուած վերարտադրության վրայ. «Արդ, ի ծաղկալից գրքոյս թուականն յոյժ հնացեալ էր, եւ հազիւ թէ միայն նշմարանքն երեւէր, եւ մեք տեսեալ զնա՝ աստէն եղաք թուական գրքոյս, որ էր ՊԶԷ.ումն (1438), Ապրելի Է.ումն (7), Աւետեաց տօնին աւարտն եղեալ էր. գրեցաւ ձեռամբ Յովհաննէս վարդապետին, ի Կեսարիայ, որ է Ղայսարի քաղաքին, ի հրաշալի սուրբ աթոռն սրբոյն Յովհաննու Կարապետին: Վասն այն գրեցաք, զի զաշխատանս նորին տեսանելով՝ մէկ բերան տացեն զողորմին» (762բ): Մտածելով, որ «նորոգողը լաւ չի կարողացել վերծանել գլխաւոր յիշատակարանը, եւ ստացողին շփոթել է գրչի հետ» (գրչի անունն Ազարիա է, ստացողինը՝ Յովհաննէս եպս.), նորոգողին հետեւելով՝ Խաչիկեանը ձեռագրի գրչության վայր համարել է Կեսարիան¹⁰:

Վստահ ենք, որ այստեղ շփոթ չկայ, ձեռագրում առկայ կէտադրության կիրառումով ամէն ինչ յստակուում է. «Աւետեաց տօնին աւարտն եղեալ էր: Գրեցաւ ձեռամբ Յովհաննէս վարդապետին, ի Կեսարիայ», այսինքն՝ Կեսարիան ԺԸ. դ. յիշատակագրության գրչության տեղն է, նրա հեղինակն էլ՝ մեր ձեռագրի ստացող Յովհաննէս արքեպիսկոպոսից տարբեր՝ Կեսարացի ոմն Յովհաննէս վարդապետ է:

Այս Յայսմաւորքը նախկինում պատկանել է Թաւրիզի Արամեան գրադարանին եւ Էջմիածին է եկել 1913 թ. Ապրիլին¹¹, իսկ մինչ այդ՝ 1905-6 թթ. բաւական մանրամասն նկարագրուել է Հ. Աճառեանի ձեռքով¹²: Այստեղ՝ ձեռագրի արտաքին-էլակէտային տուեալների մէջ կարդում ենք. «ԳԸԻՉ՝ Ազարիա, բայց վերջին մասը գրած է Մարգարայ, ինչպէս կը յիշատակուի յայտնապէս սկսեալ 691բ ե-

⁹ Յուցակ ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Ա., Կազմեցին՝ Օ. Եզանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան, Ներածութիւնը՝ Օ. Եզանեանի, Խմբագրութեամբ՝ Լ. Խաչիկեանի, Ա. Մնացականեանի, Երեւան, 1965, էջ 1228 (այսուհետեւ Յուցակ ձեռագրաց ՄՄ, Ա.):

¹⁰ Տե՛ս ԺԵ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ, Մասն Ա. (1401-1450 թթ.), Կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, 1955, Հ¹⁰ 546, էջ 491-2 (այսուհետեւ՝ ԺԵ. Ա., Բ. մասը (1451-1480 թթ.), Երեւան, 1958 ժԵ. Բ.):

¹¹ Տե՛ս Օ. Եզանեան, Մատենադարանի ձեռագրական հաւաքածոները.- Յուցակ ձեռագրաց ՄՄ, Ա., էջ 80, 88:

¹² Տե՛ս Յուցակ հայերէն ձեռագրաց Թաւրիզի, Կազմեց Հրաչեայ Յ. Աճառեան, Վիեննա, 1910, Մխիթարեան տպարան, էջ 39-42 (Հ¹⁰ 48)

րեսէն: ՏԵՂ՝ Նախավկայի վանք: ՏԵՐ՝ Յովհաննէս արքեպիսկոպոս, առաջնորդ Նախավկայի վանուց: Թուական՝ ՊՁԷ. = 1438»¹³: Նախավկայի վանքը, անշուշտ, Շամբի կամ Դարաշամբի Սուրբ Ստեփաննոս Նախավկան է. սակայն Աճառեանը բաւական հետեւողականօրէն քաղել է նաեւ ձեռագրի գրչի յիշատակագրութիւնները (սրանց մէջ Նախավկայի վանք անունը չկայ) եւ համադրել նրանց տուեալների տարբերութիւնները. ստացող «Յովհաննէս արքեպիսկոպոսին կը տրուին մեծ մեծ գովեստներ, այսպէս՝ էջ 147բ. Յովհաննէս եպիսկոպոսին՝ աթոռակալին Սուրբ առաքելոյն Բարդուղիմէոսի... 252ա՝ զքաջ հովուապետն եւ զարհիւական գլուխն, գտէր Յովհաննէս արքեպիսկոպոսն Սուրբ ուխտիս Բարդուղիմէոսի առաքելոյն»¹⁴: Մենք եւս կարդացինք բոլոր յիշատակագրութիւնները եւ տեսանք էլի մէկը. «ստացողի սուրբ գրոցս Տէր Յովհաննէս արքեպիսկոպոսի Սուրբ առաքելոյն Բարդուղիմէոսի» (387բ): Նկատեցինք մի մանրամասն եւս. ձեռագրիս երկրորդ գրիչ Մարգարան¹⁵ առաջին մասում երիցս յիշատակուած է իբրեւ թղթի կոկող. «եւ բարեմիտ եւ հեզահողի կրօնաւորին՝ փակակալի սուրբ տաճարիս Մարգարին, ի կոկել թղթիս» (182բ. հմմտ. նաեւ 228բ, 287ա):

Ակնյայտ է, որ այս ամէնը ցուցադրում են գրչութեան տեղը՝ Սուրբ Բարդուղիմէոսի վանքը, որի եւ նրա թեմի առաջնորդն էր ձեռագրի ստացողը. նոյն վանքի միաբան էին թէ՛ Ազարիա գրիչը եւ թէ՛ փակակալ, ձեռագրի թղթի կոկող եւ նրա վերջին մասի գրիչ Մարգարէ կրօնաւորը: Իսկ Բարդուղիմէոս առաքելալի վանքը Դարաշամբի Նախավկան չէ, նրանից տարբեր՝ Մեծ Աղբակ գաւառում գտնուող այլ վանք է, ուստի եւ վստահ ենք, որ Աճառեանի նկարագրութեան մէջ գրչութեան վայրը Նախավկայի վանքը եւ ստացողին վերջինիս առաջնորդ համարելն անուշադրութեան արդիւնք է: Տեղանունների փնթի բառարանում այս վանքի մասին կապակից տեղեկութիւն չգտանք¹⁶, ուստի եւ դիմեցինք նախ մեր

¹³ Նոյն տեղում, էջ 39:

¹⁴ Նոյն տեղում, էջ 41:

¹⁵ Գրած մասն է 686րդ թերթից մինչեւ վերջ. նախորդի՝ Ազարիայի գրի համեմատ սրա գիրն անվարժ է, ուրեմն՝ սա, երեւի, Մարգարայի գրչութեան առաջին փորձերից է:

¹⁶ Տե՛ս Թ. Խ. Յակոբեան, Ստ. Տ. Մելիք-Բախշեան, Յ. Խ. Բարսեղեան, Հայաստանի եւ յարակից շրջանների տեղանունների բառարան, Չորս հատորով. հտ. 1՝ Ա-Դ, Երեւան, 1986, էջ 62Բ (այսուհետեւ՝ ՏԲ). «Բարդուղիմէոսի վանք... Մեծ Հայքի Վասպուրական աշխարհի Աղբակ գաւառում: «Յուցակ ձեռագրացում» մի տեղ այսպէս է կոչուած Ս. Բարդուղիմէոսի վանքը (տե՛ս)». ըստ վերջին ցուցումի գնում եւ երկու անգամ իրար ետեւից կարդում ենք. «Սուրբ Բարդուղիմէոս... գիւղ Արեւ. Հայաստանում, Վանի նահանգի Հեքեարի գաւառում. տե՛ս Վանքի գիւղ» (նոյն տեղում, հտ. 4՝ Ն-Վ, Երեւան, 1998, էջ 716), մի քանի էջ անց կարդում ենք չորս «Վանքի գիւղ»երից երկրորդը. «Վանքի գիւղ... Դեեր, Ճամեղերէ, Սուրբ Բարդուղիմէոս, Սուրբ Բարդուղիմէս, Վանքի գեղ - Գիւղ Արմ. Հայաստանում, Վանի նահանգի Հեքեարի գաւառում, Բաշկալայի գոյկ-ում, Բաշկալա գբ-ից մօտ 20 կմ հս-արլ, Մեծ Զաբ աջակողմեան Վանքի գետ վտակի ափին: Եղել է Ս. Բարդուղիմէոս վանքի սեփականութիւնը, որի համար կոչուել է Վ. գ. ... Յայտնի էր նաեւ Դեեր անուամբ (տե՛ս)» (նոյն տեղում, էջ 76Բ): Այս վերջին ցուցումով էլ կարդալով «Դեեր» բառայօդուածը (նոյն տեղում, հտ. 2՝ Դ-Գ, Երեւան, 1988, էջ

հանրագիտարանին. «Բարդուղիմէոս Ս. Առաքելի վանք... Վասպուրականի Մեծ Աղբակ գաւառում, Բաշկալա (Ադամակերտ) քաղաքից հիւսիս արեւելք: Այժմ կիսաւեր է: Ըստ ենթադրութեան՝ հիմնադրուել է Դ. դարում... Եկեղեցու գմբէթը եւ գաւթի երդիկի ռոտոնդաձէ ծածկը այժմ աւերուած են»¹⁷. այս յօդուածի հեղինակ Արմէն Զարեանն արել է վանքի առաւելապէս ճարտարապետական նկարագրութիւնը, իսկ Հ. Համազասպ Ոսկեանը բազմատեսակ աղբիւրների գործածումով գրել է վանքիս հարուստ պատմութեան ընդարձակ ուրուագիծը¹⁸, ուր, Աճառեանի նկարագրութեան հիման վրայ, անդրադարձել է նաեւ մեր ձեռագրի տեղեկութիւններին եւ ստացող Յովհաննէս արքեպիսկոպոսին համարել Աղբակի առաջնորդ եւ Ս. Բարդուղիմէոս վանքի վանահայր¹⁹:

Դ՝ Հ^ր 1511 ձեռագրի գրչութեան յիշատակարանի մեզ համար կարեւոր մասն այս է. «Ի թվաբերութեանս հայոց ի ՋԲ. (1471) թուականին գրեցաւ գիրքս սոսկացուցիչ ի ձորս Շիապունեաց, ի գեղս որ կոչի Կուքի, ընդ հովանեաւ Սուրբ Հազարաբիրացս եւ սուրբ կաթողիկէիցս՝ Սուրբ Աստուածածնի եւ Սուրբ Ստեփաննոսի, եւ գեղամիջի Սուրբ Գրիգորիս եւ Սուրբ Նշանիս եւ այլ միահամուռ Վարդանանց սուրբ նահատակացս...» (607բ)²⁰: Միւնիքի Շահապօնք գաւառի Կուքի գիւղի եւ նրա մօտ գտնուող Հազարաբիրաց վանքի առաջին՝ հպանցիկ նկարագրութիւնն արել է Հ. Ղ. վրդ. Ալիշանը²¹, երկրորդը՝ Գարեգին կաթողիկոս Յովսէփեանը, որ նաեւ հրատարակել է իր տեսած արձանագրութիւնները²². վերջինը՝ 1976 թ. առաջ, Կուքիում եղել է Արգամ Այվազեանը, որ տեղեկացրել է, թէ Յովսէփեանի տպագրած արձանագրութիւններից շատերն արդէն գոյութիւն չունեն²³, ապա իր յօդուածն աւարտել է հետեւեալով. «Պատմական Կուքի գիւղի

69), կրկին՝ վանքի մասին որեւէ բան չենք գտնում:

¹⁷ Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 2, Երեւան, 1976, էջ 314-5. այստեղ կայ նաեւ վանքի յատակագիծը եւ ընդհանուր պատկերը՝ հարաւ-արեւմուտքից:

¹⁸ Տե՛ս Վան-Վասպուրականի վանքերը, Գ. մաս, Գրեց Հ. Համազասպ Ոսկեան, Վիեննա, 1944, Գ., էջ 785-805:

¹⁹ Նոյն տեղում, էջ 793, իսկ էջ 1110՝ վանքի նկարը:

²⁰ Թերի մնացած յիշատակարանի շարունակութիւնն այս է. «ի հայրապետութեան տեառն Ռստակիսի, եւ յաշխարհակալութեանն Հասան-բակին, որ յաղթեաց Ջհանշային եւ եկեալ ի դաշտն Խօեայ եւ փախըստական արար գՀասանալի, եւ երթեալ ի Ղարապաղն, եւ անդ եւս գՊարսկաց բռնաւորն՝ գսուլտան //»: Լ. Խաչիկեանը լրացրել է «[Բուսախտն եսպան]». տե՛ս ԺԵ. Բ., Հ^ր 403, էջ 319: Յիշատակարանիս լրիւ բնագիրը եւ ձեռագրիս այլ յիշատակագրութիւններ տե՛ս Գարեգին կաթողիկոս Յովսէփեան, Խաղբակեանք կամ Պոռշեանք Հայոց պատմութեան մէջ, Բ. հրատարակութիւն, Անթիլիաս-Լիբանան, 1969, էջ 372-3 (այսուհետեւ՝ Խաղբակեանք):

²¹ Տե՛ս Միսական. Տեղագրութիւն Միւնեաց աշխարհի, ի Հ. Ղեւոնդեայ Ս. Ալիշան, Ս. Մխիթարեան, Վենետիկ, 1893, էջ 486-7 (այսուհետեւ՝ Միսական):

²² Տե՛ս Խաղբակեանք, էջ 30-31, 244-6:

²³ Տե՛ս Ա. Այվազեան, Օծոփի եւ Կուքիի յուշարձանները, Պատմա-բանասիրական հանդէս, 1976/2, էջ 257-65. ընդհանուր գծերով նկարագրել է գիւղի յուշարձանների եւ «Հազարբիւ-

հայկական ազգաբնակչությունը մօտաւորապէս 1755-1760 թթ. գաղթել է այդտեղից եւ բնակություն հաստատել Վրաստանի նախկին Կումիսու գաւառի Ծինդարո գիւղում, որտեղից հետագայում տեղափոխուել են Թիֆլիս»²⁴:

Այս հեղինակների արածի ամփոփումը հետեւեալն է. «ԳՈՒՔԻ... գիւղ Մեծ Հայքի Մինիք աշխարհի Շահապօն գաւառում: Այժմեան Նախիջեւանի ԻՍՍՀ Շահբուզի շրջանի՝ Քիւքիչայի ակունքի մօտի Այգեվէտ լեռնալանջի Քիւքու գիւղն է... Յիշատակում է ԺԳ. դ. Ստ. Օրբէլեանի կողմից, այդ ժամանակ Գուքին հայաբնակ էր եւ Տաթեւին տարեկան վճարում էր 12 միաւոր հարկ... Գուքին միջին դարերում խոշոր բնակավայր է եղել: Այժմ նշմարում են միայն Ս. Նշանի փլատակները, որոնց վրայ կան հայերէն շատ վիմագրություններ»: Իսկ «ԳՈՒՔԻ Ս. ՆՇԱՆ» անուան ներքոյ կայ նաեւ հետեւեալը. «Կառուցուել է ԺԲ-ԺԳ. դդ., վերանորոգուել է ԺԷ. դ.: Միջին դարերում այն եղել է Մինիքի նշանաւոր մշակութային կենտրոններից մէկը... Շէնքի քարաբեկորների եւ 20ի չափ գերեզմանաքարերի վրայ կան հայերէն արձանագրություններ»²⁵:

Մատենագրութեան եւ աղբիւրագիտութեան տեսանկյունից կարելոր համարելով եւ նկատի ունենալով այն հանգամանքը, որ գիտութեան մէջ այս վանքի մշակութային գործունեությունը քիչ է արծարծուել, դիրացնելով ապագայ հնարաւոր ուսումնասիրողի գործը, փոքր շեղումով միատեղում-ամփոփում ենք ցրիւ տեղեկությունները եւ այստեղ թուարկում Գուքիի վանքում գրուած՝ մեզ յայտնի ձեռագրերը.

ա. 1278 թ., Ներսիսի Լամբրոնացոյ Մեկնություն պատարագի, ձեռ. Բագրեւանդի (Իւլքիլիսա) Ս. Յովհաննու վանքի²⁶:

բ. 1332 թ., Ներսիսի Լամբրոնացոյ Մատենագրությունը, Մխիթարեան Վենետիկի ձեռ. Հ¹⁰ 1630/1139. գրիչ՝ Դանիէլ, Շմաւոն²⁷:

րաց» կամ «Հագարփրկիչ» վանքի մնացորդները եւ տպագրել վերջինիս երկու աղօտ լուսանկար:

²⁴ Նոյն տեղում, էջ 265:

²⁵ ՏԲ, հտ. 1, էջ 984: Անհասկանալի է, թէ աղբիւրներում գերազանցապէս «Գուքի» ձեւով յիշատակուած անունն ինչպէս է այս բառարանում դրուել Գ տառի ներքոյ. իր բուն տեղում (հտ. 3՝ Կ-Ն, Երեւան, 1991, էջ 297) անունը տեսնում ենք «Գուք, Գուքի, Գուքիի Հագարփրկիչ, Գուքի վանք եւ Գուքոյ վանք» ձեւերով, ապա նրանց ցուցումով առաջին հատորում կարդում «Գուքի» (տարբերակները՝ «Գիւկիա, Գոնքի, Գուգի, Գուք, Գուքի, Քիւքի, Քիւքի, Քիւքի») եւ «Գուքիի Ս. Նշան» յօդուածները:

²⁶ Տե՛ս Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ, Գրեց Մեսրոպը արքեպիսկոպոս Սմբատեանց. 1897-1904, Տիֆլիս, 1904, էջ 140 (այսուհետեւ՝ Երնջակ). «գրեալ յամի Տեառն 1276 (թին հայոց ՉԻԷ.) ի վանս Գուքուայ». թւում է 1276ը վրիպակ է, պէտք է լինի 1278. այստեղից առել եւ 1276ի ներքոյ արձանագրել է՝ Հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. ԺԳ. դ., Կազմեց Ա. Ս. Մաթեոսեան, Երեւան, 1984. Հ¹⁰ 383, էջ 468: Հմմտ. Խաղբակեանք, էջ 244:

²⁷ Տե՛ս Սիսական, էջ 487, ԺԴ. դարի հայերէն ձեռագրերի յիշատակարաններ. Կազմեց Լ. Ս. Խաչիկեան, Երեւան, 1950, Հ¹⁰ 308, էջ 247. Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանի Մխիթարեանց ի Վենետիկ, հատոր Զ., Յօրինեց Հ. Սահակ վ. Ճեմաճեմեան՝ Մխիթարեան

գ. ԺԴ. դ. կէս, Քարոզգիրք Բարթողիմէոս Մարադացոյ եւ Գիրք դժոխոց, ՄՄ ձեռ. Հ¹ 5097, գրիչ՝ Դանիէլ Կուքեցի, Գրիգոր եւ անանուն, ստացող՝ Մարգարէ վրդ. Օծոպեցի²⁸:

դ. 1409 թ. Ստորոգութիւնք Արիստոտէլի, ձեռ. Գանձասարի վանքի²⁹:

ե. 1461 թ., Պատարագամատոյց, ձեռ. Վանի Կարմրաւոր Աստուածածնի վանքի, գրիչ Յովսէփ եպս.³⁰:

զ. 1471 թ., Յայսմաւորք, ՄՄ ձեռ. Հ¹ 1511. գրիչ՝ Մանւէլ³¹:

է. 1478 թ., Գանձարան, ՄՄ ձեռ. Հ¹ 4433. գրիչ՝ Մանւէլ³²:

ը. 1488 թ., Աւետարան, Նոր Զուղայի ձեռ. Հ¹ 29/73, գրիչ՝ Մանւէլ³³:

թ. 1493 թ. Մաշտոց, Բեռլինի պետական գրադարանի հայ. ձեռ. Հ¹ 58, գրիչ՝ Մանւէլ³⁴:

ժ. 1495 թ., Աւետարան, ձեռ. Նախիջեւանի Զահուկ գիւղի եկեղեցու, գրիչ՝ Մանւէլ³⁵:

ժա. 1496 թ., Աւետարան, ձեռ. Տիգրանակերտի Ս. Մարգիս եկեղեցու, գրիչ՝ Մանւէլ³⁶:

Տասնմէկից վեցը (զ-ժա.) մեր ձեռագրի գրիչ Մանուէլի գրածն են. կարծում ենք, որ հետեւողական փնտրտութիւնով կարող է պարզուել նաեւ այլ դարերի ձեռագրերի աւելի մեծ քանակ, որով եւ կգծուի Կուքիի Ս. Հազարաբիրաց վանքի

ուխտէն, Վենետիկ - Ս. Ղազար, 1996, էջ 907-20. ձեռագրիս յիշատակութիւնը տե՛ս նաեւ Խաղբակեանք, էջ 30, 245:

²⁸ Հմմտ. Խաղբակեանք, էջ 245:

²⁹ Տե՛ս Երնջակ, էջ 125. օրինակել է Գանձասարի 1868 թ. ցուցակից, հմմտ. Խաղբակեանք, էջ 245:

³⁰ Տե՛ս ԺԵ. Բ., Հ¹ 198, էջ 159. առել է՝ Փիրղալէմեան, Նոտարք, էջ 205ից. հմմտ. Սիսական, էջ 487, Երնջակ, էջ 130, Խաղբակեանք, էջ 245:

³¹ ԺԵ. Բ. Հ¹ 403, էջ 318-9. հմմտ. Խաղբակեանք, էջ 245, 372-3: Յաջորդ՝ 1472 թ. Մանւէլ գրիչը նորոգել է Նոր Զուղայի Ս. Մինասի Հ¹ 415/61՝ Աւետարանը (ԺԳ. դ.) եւ գրել նրա 144-64 թերթերը. տե՛ս Ցուցակ Նոր Զուղայի, Ա., էջ 93-4, նորոգման յիշատակարանը՝ ԺԵ. Գ. Հ¹ 244, էջ 186:

³² ԺԵ. Բ. Հ¹ 544, էջ 430-1. յիշատակարանն առել է 9222իւզ. միաւորից, որ Օ. Եգանեանը 16 Ա. 1960 թ. միացրել է բուն ձեռագրին: Սա եղել է Խ. վ. Դադեանի սեփականութիւնը. տե՛ս Զ. Թօփճեան, Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետի Դադեան, մասն Ա., Վաղարշապատ, 1898, էջ 39, Հ¹ 24: Հմմտ. Խաղբակեանք, էջ 245, Երնջակ, էջ 141-2, 194-6:

³³ ԺԵ., Գ. Հ¹ 143, էջ 117-8. հմմտ. Ցուցակ Նոր Զուղայի, Ա., էջ 108-9

³⁴ ԺԵ., Գ. Հ¹ 253, էջ 192. առել է՝ Die handschriften-Verzeichnisse der Königlichen Bibliothek zu Berlin, Zehnter Band, Verzeichniss der armenischen Handschriften von Dr. N. Karamianz, Berlin, 1888, էջ 47, հմմտ. Սիսական, էջ 487, Խաղբակեանք, էջ 245-6:

³⁵ ԺԵ., Գ. Հ¹ 292, էջ 217. առել է՝ Երնջակ, էջ 134-6ից, ուր գրչութեան վայրի մասին կարդում ենք. «Այժմ եւս Կուքի անունի գիւղս, եւ վանորայքն աւերակ» (էջ 135, ծ. 1). հմմտ. Խաղբակեանք, էջ 246:

³⁶ ԺԵ., Գ. Հ¹ 315, էջ 230. առել է՝ Թորոս աղբար, Գրեց Գ. Սրուանձտեանց, [մասն Բ.], Կ. Պոլիս, 1884, էջ 423. հմմտ. Սիսական, էջ 487, Խաղբակեանք, էջ 246:

մշակութային-գրչական գործունեության աւելի ընդարձակ պատկեր:

Այսպիսով, մեր խնդրոյ առարկայ ճառը Մեծոփեցու հեղինակութիւնը համարող վկայութիւնները լիովին արժանահաւատ են. պահպանուել են Մեծոփականքին բաւական մօտ՝ նրա եւ Տաթևի միջեւ գտնուող եւ, անկասկած, նրա մշակութային միջավայրին պատկանած Աղբակի Ս. Բարդուղիմէոսի եւ Շահապօնքի Կուքի գիւղի Ս. Հազարաբիրաց վանքերում օրինակուած ձեռագրերում. նաեւ անկասկած է, որ Նոր Զուղայի 1615 թ. գրուած ձեռագիրը (տե՛ս ծ. 1) եւս պէտք է օրինակուած լինի նոյն միջավայրում գրուած գաղափարից: Երեւի անտրամաբանական չի լինի մտածելը, թէ 1438 թ. առաջ գրուած ճառը կարող էր Ս. Բարդուղիմէոսի վանք ուղարկած լինել նրա հեղինակ Թովմա Մեծոփեցին³⁷, ուստի եւ չի բացառուում, որ նրա գրածը լինի նաեւ վերջինիս ունեցած ծիսական ցուցումը. «կարդայ՝ եւ Բ. (2) աւուրս զխորհրդաճառ ասայ՝ իւր սարօքն, զի նախատօնակ է Աւետեաց Աստուածածնին»: Միւս կողմից՝ ճառի «Պարտ է գիտել» սկսուածքը Մեծոփեցու նախասիրած ձևերից է. ճիշտ այսպէս են սկսում նրա Պատմութիւնը եւ փոքրածաւալ չորս այլ գործ:

Ուրեմն՝ ճառիս հեղինակն իսկապէս Թովմա Մեծոփեցին է, որի բանաստեղծական վաստակը Լ. Խաչիկեանը ներկայացրել է «մեզ հասած փշրանքներ»ով՝ նրա գրած յիշատակարաններից երկուսի հատուածներով³⁸, մինչդեռ նորայայտ այս գործը, որ աւելի ճիշտ կլինէր կոչել ներքող կամ ձօն, ծայրէծայր չափածոյ է՝ գրուած է շարականային ոճի անհամաչափ վանկային սկզբունքով, որի դէպքում «միեւնոյն քերթուածքի մէջ կանոնաւոր եւ անկանոն տողերի հետ ի միասին կարող են գործադրուիլ եւ ամէն տեսակ համաչափ տողեր»³⁹: Ուշագրաւ է նաեւ այն, որ ձեռագրերի մեծ մասում առկայ են գուցէ հեղինակային սկզբնագրից բխող գլխատառեր, որոնք պահպանել ենք՝ անտեսելով կէտադրման կանոնը, եւ հիմնականում նրանցով առաջնորդուելով ենք արել բնագրի տողատումը: Ի վերջոյ, այս գործի գիւտը նշանակում է, որ ապագայում Թովմա Մեծոփեցու գրչի նոր արգասիքների յայտնաբերումը շատ հաւանական է:

Ճառը պարունակող ձեռագրերը թուարկելուց առաջ, ներկայացնենք Յայսմաւուրքի մէջ նրա տեղադրութեան պատկերը. բոլոր օրինակներում այն դրուած է «Արեգի ԻԹ. Եւ Ապրիլի Զ.» օրը⁴⁰: Երեքում Ապրիլի 6ին այլ նիւթ չկայ, մեր ճա-

³⁷ Բոլոր դէպքերում նոր գրուած ճառն առանց նրա իմացութեան այլ վանք ուղարկուել չէր կարող:

³⁸ Տե՛ս Լ. Խաչիկեան, Երկեր, Գ., էջ 699-700:

³⁹ Աւետիք Բահաթրեան, Հին հայոց տաղաչափական արուեստը. Քննական տեսութիւն, Շուշի, 1891. վերահրատ.՝ Երեւան, 1984, էջ 95. հմմտ.՝ 1984ի տարբերակում տե՛ս նաեւ՝ Է. Զրբաշեան, Կարեւոր աւանդ ազգային բանաստեղծական արուեստի ուսումնասիրութեան մէջ, էջ ԻԵ.:

⁴⁰ Վրիպամբ միայն Դ.432բ՝ «Արեգ»ի փոխարէն գրուած է «Ահկի», իսկ Ժ.452բ՝ Արեգի «ԻԹ.»ի

որից յետոյ յաջորդ օրուայ նիւթն է. «Արեգի Լ. եւ Ապրիլի Է. Տաւն է Աւետեաց սուրբ Աստուածածնին - Ամենասրբունի կոյսն Մարիամ Աստուածածնին, աւրինեալն ի կանայս, ծնեալ եղեւ ի Յովակիմայ եւ յԱննայէ, աւետեալք...» (քաղուածքը ըստ՝ Ա.459բ, հմմտ. Ծ.424բ, Կ.379ա): Միւսներից մէկում նոյն Ապրիլի 6ին կայ. «Յայսմ աւուր վկայաբանութիւն սրբոյն Պօսիլիպօսի, որ էր ի յամս Անդրիանոսի կռապաշտ արքային...» (Ե. 478ա)⁴¹, իսկ 10ում, կրկին՝ Ապրիլի 6ին, հետեւեալն է. «Յայսմ աւուր վարք սքանչելեաց Սրբոյն Ռուսինոսի - Սա էր տնտես վանաց եւ գկամս Աստուծոյ միշտ եւ հանապազ կատարէր...» (քաղուածքը ըստ՝ Թ.391ա, հմմտ. Բ.399բ, Գ.396բ, Լ.455բ. իսկ Զ.459ա, Է.410բ, Ը.410բ, Ժ.454բ, Ի.445բ, Խ.323ա՝ Ռուսինոսը դարձել է «ի գաւառէն Սոկաց, ազգաւ հայ եւ էր տնտես վանացն Փասայ...», քաղուածքը ըստ՝ Զ.459ա): Վերջինում Ապրիլի 6ին կայ. «Յայսմ աւուր վկայաբանութիւն սրբոյն Բասիմոսի - Սա արեղայ էր եւ հայր վանաց յերկրէն Պարսից...» (Դ.434բ.): Ծերենցի Յայսմաւուրքի ձեռագրերի մեծ մասում, ուր Մեծօրհնոյ ճառը չկայ, Ապրիլի 6ին դրուած է «Վկայաբանութիւն սրբոյն Մաբայ ստրատելատին» երբեմն էլ հէնց այս՝ Ռուսինոսի եւ Բասիմոսի վարքերը (տարբեր ձեռագրերում սրանք երբեմն դրուած են մէկ-երկու օր առաջ կամ ետ):

Այսպիսով, մեր օրինակների մեծ մասում, Մեծօրհնոյ ճառի ներմուծման հետ միասին, նոյն օրուայ՝ Ծերենցի Յայսմաւուրքի օրինակների մի մասի համար սովորական՝ Ռուսինոսի եւ Բասիմոսի վարքերը պահպանուել են՝ միաժամանակ զգալիօրէն համառոտուելով:

ՃԱՌԻ ԶԵՌԱԳՐԵՐԸ⁴²

Ա. Հ^ր 4517. 458ա-9բ. 1438 թ., Ս. Բարդուղիմէոսի վանք, գրիչ՝ Ագարիա, Մարգարայ (թ. 686-766. նաեւ՝ վանքի փակակալը եւ ձեռագրիս թղթի կոկողն է՝ 182բ), ստացող՝ Յովհաննէս արքեպս. վանահայր Ս. Բարդուղիմէոսի վանքի եւ առաջնորդ Աղբակի թեմի, 766 թերթ, 33x24. 35 տող: 458ա. ստ. լւ-ում՝ «Այս ճառս նոր է Մեծ վարդապետին է արարեալ Թումայի Մեծօրհնոյն. Կարդայ՝ եւ Բ. աւուրս զխորհրդնաճառ ասայ իւր սարօքն, զի նախատօնակ է Աւետեաց Աստուածածնին»:

փոխարէն՝ «Թ.»:

⁴¹ Երեւի պէտք է մտածել, որ այս վկայաբանութեան՝ Ապրիլի 6ին դրուած լինելն անօրինաշափ պատահական է:

⁴² Գոյքահամարներից յետոյ գրել ենք ձեռագրերում ճառի զբաղեցրած էջահամարները, այնուհետեւ՝ էլակէտային հիմնական տուեալները: Բոլորը Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրեր են. բոլորի նիւթը՝ թուղթ, գրութիւնը՝ երկսիւն, գիրը՝ բոլորգիր, ուստի նկարագրութիւնների մէջ այս տուեալները չենք կրկնել: Բացի Բ.399բ, միւսներում ճառի վերջին նախադասութիւնը շարունակելով՝ յաջորդում են ձեռագրերի ստացողներին, նրանց մերձաւոր ազգականներին եւ գրչին «արքայութիւն» խնդրելու յորդոր-յիշատակագրութիւններ, որոնցից բերում ենք միայն մի նմուշ. Ա.459բ՝ «Եւ արքայութիւն ստացողի սուրբ գրոց Տէր Յովհանէս արեւալիսկոպոսին եւ ծնողաց նորին, եւ ամենայն արեան մերձաւորաց նորին, եւ ձեզ՝ լսողացդ եւ կարդացողացդ. Ամէն»:

Բ. Հ¹ 4696. 398ա-9բ. 1458 թ., գրիչ՝ Աւագտէր, Աստուածատուր, Յովհաննէս, ստացող՝ Գրիգոր քիյ⁴³, 533 թերթ, 40,5x27. 37 տող:

Գ. Հ¹ 5313. 395ա-6բ. 1465 թ., ԺԵ. դ. (1476, 1486ից յետոյ), Վան, գրիչ՝ Վարդան երէց, Նիկողայոս (Ա), Կարապետ (Բ), ստացող՝ Աւետիս քիյ (Ա, Բ), կազմող՝ Ներսէս վարպետ (1572 թ.)⁴⁴. 604 թերթ, 36x26. 36 տող:

Դ. Հ¹ 1511. 432բ-4բ. 1471 թ., Կուքի գիւղ (ի ձորս Շհապունեաց), գրիչ՝ Յակոբ (2ա-34բ, 48ա-72ա¹), Թաթէոս (35ա-47բ), Մանուէլ (72ա²-607բ), ստացող՝ Յովսէփ արդ, Յորդանան, 609 թերթ, 32x21,5. 37 տող: 432բ. ստ. լս-ուս՝ «Զայս ճառս նոր է արարեալ Մեծ Վարդապետն Թովմա Մեծովեցի»:

Ե. Հ¹ 4688. 476բ-8ա. ԺԶ. դ. (1573 թ.), Բաղէշ, գրիչ՝ Առաքել եպս., Միսիթար, ծաղկող՝ Մելքիսէթ, ստացող՝ խոջայ Պոլուտախ, 659 թերթ, 42x29. 37 տող:

Զ. Հ¹ 4675. 456բ-8բ. 1589 թ. գրիչ՝ Մկրտիչ քիյ, ստացող՝ խոջայ Մէլիք, 644 թերթ, 42x30. 36 տող:

Է. Հ¹ 4718. 408բ-10բ. ԺԶ. դ., գրիչ՝ Մկրտիչ, ստացող՝ Ստեփաննոս կր., 569 թերթ, 40x28. 35 տող:

Ը. Հ¹ 4720. 408ա-10բ. ԺԶ. դ., գրիչ՝ Կարապետ, Ատոմ, ստացող՝ խոջայ Գուռ-ջիբէկ, 611 թերթ, 37x25. 33-35 տող:

Թ. Հ¹ 4728. 389ա-91ա. ԺԶ. դ., գրիչ՝ Ներսէս, Մարգարէ Արճիշեցի, ստացող՝ Վարդան եւ Շահապ դարբիններ, 513 թերթ, 36x26. 35 տող:

Ճ. Հ¹ 4704. 452բ-4բ. ԺԷ. դ., գրիչ՝ Կարապետ, ստացող՝ խոջայ Յովաննէս, 597 թերթ, 40x26. 36 տող:

Ի. Հ¹ 4731. 443բ-5բ. ԺԷ. դ., գրիչ՝ Սարգիս, ստացող՝ Էվագ, 624 թերթ, 39x26. 39 տող:

Լ. Հ¹ 6214. 454ա-5բ. ԺԷ. դ., ստացող՝ Գասպար Սողոթէնց, 619 թերթ, 39,5x24. 37 տող:

Խ. Հ¹ 6218. 321բ-3ա. ԺԷ. դ., գրիչ՝ Ղուկաս, ստացող՝ մհտ. Առաքել, 423 թերթ, 38x24. 38 տող:

Օ. Հ¹ 4887. 422բ-4բ. 1706-1714 թթ., Էջմիածին, գրիչ՝ Թումայ Սոկացի, ստացող՝ պարոն Անդրէաս, 458 թերթ, 31x21. 31-32 տող:

Վ. Հ¹ 4872. 376բ-8բ. 1709 թ., Վան, գրիչ՝ Թումայ, ստացող՝ Աւետիս կր, 390 թերթ, 33x23. 32 տող:

Շատ ուշագրաւ է այս ձեռագրերի նախկին պատկանելութեան պատկերը. յիշենք, որ Ա՝ ստացունել է Թաւրիզի Արամեան գրադարանից, Դ՝ Էջմիածնի հին հաւաքածուից է (նախկին պատկանելութիւնն անյայտ), Լ՝ 1924-1936 թթ. ընթաց-

⁴³ Գրչութեան յիշատակարանները տե՛ս ԺԵ. Բ. Հ¹ 151, էջ 113-4:

⁴⁴ Երգասաց Յովհաննէս Խլաթեցու վկայարանութեան Ա օրինակն է. տե՛ս «Էջմիածին», 2008/Բ, էջ 71: Գրչութեան գլխաւոր յիշատակարանը տե՛ս ԺԵ. Բ., Հ¹ 286, էջ 233-5:

քում բերուել է Գաւառի Ս. Աստուածածին եկեղեցու⁴⁵, Խ՝ նոյն տարիներին ստացուել է Երեւանի Հնութիւնների պահպանութեան կոմիտէից⁴⁶: Առաւել նշանակալի է, որ 15 ձեռագրից 11ը վասպուրականեան ծագում ունեն. Բ, Է՝ Վարագայ վանքից, Կ՝ Կտուց անապատից. միւսները Վանի եկեղեցիներից են. Գ, Զ, Ի, Ծ՝ Ս. Պօղոս»Պետրոս, Թ, Ժ՝ Ս. Վարդան, Ե՝ Ս. Նշան, Ը՝ Ս. Ծիրանաւոր⁴⁷: Յայտնի է վերջիններիցս միայն երեքի գրչութեան վայրը. երկուսը՝ Վան (Գ, Կ), մէկը՝ Բաղէշ (Ե), սակայն կարելի է վստահ լինել, որ մնացեալ ութի մեծ մասը⁴⁸ եւս գրուել են Վասպուրականում: Եզրակացութիւնը պարզ է. անկախ նրանից, որ հետագայում անպայման պարզուելու են Մեծոփեցու ճառը պարունակող այլ ձեռագրեր եւս, այն առաւել գործածական է եղել Վասպուրականում:

* * *

Թուարկուած Յայսմաւորքների հիման վրայ հրապարակումս պատրաստ էր եւ տպագրութեան յանձնուած, երբ նկատեցինք նոր եւ կարելոր մի իրողութիւն. բնագրիս 118-268 տողերի մասը նոյնութեամբ, սակայն՝ անխորագիր, կայ Մեծոփեցու գրական վաստակի ճանաչման եւ գնահատման համար շատ կարելոր եւս մէկ՝ ՄՄ Հ^մ 599 ձեռագրում, որ ժամանակին Լ. Խաչիկեանը համարել է «Թ. Մեծոփեցու ինքնագիր»⁴⁹, համառօտ նկարագրութեան մէջ՝ «ԺԵ. դ. (1413ից առաջ), գրիչ՝ Թովմայ Մեծոփեցի»⁵⁰ իսկ ընդարձակի մէջ՝ «Խլաթայ վանք, ՊԿԲ. - 1413»⁵¹: Այս ամէնով հանդերձ, տպագրութեան յանձնուած մեր մի այլ յօդուածում ձեռագրագիտական քննութեամբ պարզել ենք, որ Մեծոփեցին Խլաթի Աղէթ գիւղի (Աղթայ) վանքում 1413 թ. սոսկ գտել եւ միաւորել է անուշադրութեան հետեւանքով վնասուած միաշափ երկու ձեռագրի մնացորդները՝ ներկայիս ՄՄ Հ^մ

⁴⁵ Տե՛ս Օ. Եգանեան, Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները, էջ 134:

⁴⁶ Նոյն տեղում, էջ 127:

⁴⁷ Նոյն տեղում, էջ 103-5:

⁴⁸ Մեծածաւալ ձեռագրերի զգալի մասի գրչութեան տեղը, թուականը եւ էլակէտային միւս տեղեկութիւններն անյայտ են զլիաւոր յիշատակարանների կորսուածութեան պատճառով, որ իր կարգին նոյն ձեռագրերի մեծ դիրքի ու ծաւալի հետեւանք է. սրանց սկզբի եւ վերջի թերթերը որպէս կանոն մաշուում են, անընթեռնելի դառնում եւ, ի վերջոյ՝ ընկնում: Յիշելով, որ 2-2,5 տարուայ ընթացքում գրուող Յայսմաւորքների կշիռը միջին հաշուով 10-15 կգ է, պէտք է նկատենք, որ միջին դարերում նրանք իրենց գրչութեան վայրերից շատ հեռու չէին տարւում: Ցանկութեան դէպքում, բոլոր օրերի վերջում առկայ յիշատակագրութիւնները կարդալով, գուցէ հնարաւոր լինէր պարզել այս ձեռագրերից եւս մի քանիսի գրչութեան տեղը, բայց որովհետեւ մեր ունեցած ուղղակի եւ օժանդակ տուեալներն առաւել քան բաւարար են ճառիս՝ Մեծոփեցու գրչին պատկանելը ճշգրիտ-վաւերական համարելու համար, կարծում ենք, որ դա այս ձեռագրերի ապագայ նկարագրութիւնների խնդիրն է:

⁴⁹ Լ. Խաչիկեան, Աշխատութիւններ, հտ. Գ., Երեւան, 2008, էջ 697:

⁵⁰ Տե՛ս Յուցակ ձեռագրաց ՄՄ, Ա., էջ 359:

⁵¹ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուան Մատենադարանի, հտ. Բ., Կազմեցին՝ Օ. Եգանեան, Ա. Զէյթունեան, Փ. Անթաբեան, Ա. Քէօշկերեան, Խմբագրութեամբ՝ Ա. Մնացականեանի, Օ. Եգանեանի, Ա. Զէյթունեանի. Ցանկերը Վ. Դեւրիկանի, Երեւան, «Նաիրի», 2004, էջ 1463 (այսուհետեւ՝ Մայր ցուցակ, Բ.):

599 ձեռագիրը, տարել Մեծոփայ վանք եւ հետագայում օգտագործել որպէս իր նշանաւոր դասագրքի (ՄՄ ձեռ. Հ¹ 7117) տարբեր մասերի եւ Նամականիի ատաղձ⁵²:

Ձեռագրի ընդարձակ նկարագրութեան մէջ բնագրական խնդրոյ առարկայ կտորը ներկայացուած է այսպէս. «91բ-3բ [Գովեստ յամենասուրբ Աստուածածնին, ի գերագով վարդապետէն Գրիգորէ Սկեւոացոյն. ձեռ. 1521, 430ա] - Բարեբանեալ ես, ամենասրբունի Աստուածածին, երկին վեհագոյն...»⁵³: Մեծոփեցոյ «Ճառի» մաս դարձած այս «ներբողի» խորագիրը եւ հեղինակի՝ Գրիգոր Սկեւոացի անունն փակագծային ճշգրտումն արել է նկարագրութեան հեղինակ Օննիկ Եզանեանը՝ հիմնուելով Մատենադարանի Բնագրական սկզբնատողերի քարտարանի վրայ⁵⁴, որ, իր կարգին, հիմնուած է Սկեւոացոյ գործի մի այլ՝ Թովմայի կեանքի օրօք եւ Մեծոփայ վանքի մշակութային միջավայրում գրուած օրինակի՝ Գրիգոր Խլաթեցոյ Ճառքնտրի երկրորդ հատորի՝ ՄՄ Հ¹ 1521 ձեռագրի վրայ:

Գրիգոր Սկեւոացի մատենագրի (1170/75-1264/5 թթ.) կենսագործունէութիւնը պատշաճ ձևով ուսումնասիրուած չէ, առաւել եւս՝ նրա գրական վաստակը մեծ մասամբ անտիպ է⁵⁵: Միաժամանակ՝ նրա ժառանգութեան խնդիրների մէջ մտնելը կարող էր մեզ հեռու տանել եւ շեղել մեր բուն նպատակից, ուստի բաւարարուցինք մեր կազմած բնագիրը համեմատելով ձեռքի տակ եղած միջոցներով պարզուած՝ հետեւեալ օրինակների հետ⁵⁶.

1. ՄՄ Հ¹ 1324, 397ա-400բ. Հաղբատ, ՉԼ. - 1281 թ., գրիչ՝ Յոհան, Բարսեղ, Աբրահամ, ստացող՝ Բարսեղ վարդապետ⁵⁷:

2. ՄՄ Հ¹ 1521, 423ա-5ա. ՊԾԵ.՝ 1406 թ., Նկարինայ անապատ, գրիչ՝ Գրիգոր

⁵² Ակնարկուած յօդուածը տպագրուած է «Բազմավէպ» հանդէսի 2008ի հատորում, միաժամանակ՝ մեր տեսակէտը հաստատուած է նաեւ Մեծոփեցոյ գրական վաստակի աղբիւրագիտական քննութեամբ, որ հրատարակուելու է ծրագրուած հատորում:

⁵³ Մայր ցուցակ, Բ., էջ 1466:

⁵⁴ Բնագրի՝ վերը վկայակոչուած 430ա սկզբնաէջը հին համարն է. սկզբնատողի քարտը գրելուց յետոյ 1950ի շուրջ ձեռագրի թերթակալումն ստուգուել-սրբագրուել է, բնագիրն այժմ բնութում է ձեռագրի 423ա-5ա էջերը:

⁵⁵ Համառօտ բնորոշում եւ գրականութեան փոքրիկ մատենագիտական ցանկ տե՛ս **Հ. Գիւրեղ վրդ. Քիպարեան**, Պատմութիւն հայ հին գրականութեան, Վենետիկ, Ս. Ղազար, 1992, էջ 459, 464: Կենսագործունէութեան հիմնական տուեալները տե՛ս Գրիգոր Յակոբեանի յօդուածում՝ Հայկական սովետական հանրագիտարան, հտ. 3, Երեւան, 1977, էջ 221. անհասկանալի է, թէ ինչո՞ւ գրեթէ նոյնութեամբ վերաբնակեցուած (Քրիստոնէայ Հայաստան հանրագիտարան, Երեւան, 2002, էջ 246) այս յօդուածը նոր տեղում ստորագրուած է երկու այլ անուններով:

⁵⁶ Գիտենք Մատենադարանի եւ այլ հաւաքածուների էլի ուրիշ ձեռագրերի գոյութիւնը, սակայն արտայայտմաւորային վեց ձեռագրի քննութիւնը մեր խնդրի համար լիովին բաւարար ենք համարում:

⁵⁷ «[Գրիգորի Սկեւոացոյ] Պատմութիւն ծննդեան եւ սննդեան կուսին Մարիամու - Ըստ բարոյցն բուսոյ բնաւորեալ է... զմահացու եւ զագրալի շարաւառոտութիւն //» (թերի):

վրդ., ստացողը՝ Ստեփանոս եւ Թումայ արեղայք, ի վայելումն՝ Յոհաննու Նկարինայ եպս.-ի:

3. ՄՄ Հ^մ 1567, 365ա-8բ. ԺԴ. դ., գրիչ՝ Սարգիս (մեր բնագիրը՝ 1647ի յաւելում է)⁵⁸:

4. ՄՄ Հ^մ 38, 41ա-55ա. Գանձասար, ՌՄԹ.- 1760 թ., գրիչ, ստացող՝ Դաւիթ վրդ. Թիֆլիզեցի, ի վայելումն՝ Թագուհի կուսի, կազմող՝ Տէր Ղազար⁵⁹:

5. ՄՄ Հ^մ 2622, 268ա-99բ. ԺԸ. դար, գրիչ՝ Յակոբ: Խորագիր՝ 268ա-99բ Բան գովեստի պատմագրաբար յաղագս ծննդեան, սննդեան, քաղաքավարութեան եւ վերափոխման ամենասրբուհի եւ միշտ կուսին Մարիամու Աստուածածինն, ասացեալ ի նորին ծառայէ եւ մաղթանաց հայցողէ, յոգնամեղ մենաւորէ Գրիգորէ [Յեսուացոյ]⁶⁰:

Պարզուեց, որ առաջին, երրորդ եւ չորրորդ ձեռագրերն անհամեմատելի են, բոլորովին այլ շարադրանք ունեն, երկրորդը համեմատելի է միայն 119-193 տողերի սահմաններում (այնուհետեւ շեղում է՝ ճառընտրային այլ շարադրանք է): Լիովին համեմատելի եղաւ միայն հինգերորդի գրեթէ վերջը հանդիսացող կտորը՝ 2622. 298բ¹ տ.15 - 299բ¹ տ.21, որին յաջորդող՝ Սկեւոացու շարադրանքի աւարտի 93 բառը չկայ թէ՛ Հ^մ 599 ձեռագրում եւ թէ՛ Մեծոփեցու բնագրում:

Սա պատահականութիւն չէ, այլ՝ հետեւանք է Գր. Սկեւոացու երկի ձեռագրական աւանդոյթի. բանասէր Թամար Մինասեանն արձանագրել է գործիս 20 ձեռագիր⁶¹, որոնցից 15ը տարբեր ընդգրկում ունեցող հատուածական⁶² օրինակու-

⁵⁸ «Աղօթք արարեալ ի վարդապետաց սրբոց Հայոց (=Գովեստ յամենասուրբ Աստուածածինն, ի գերագով վարդապետէն Գրիգորէ Սկեւոացոյն». 1521, 430ա) - Բարեբանեալ եւ ամենասրբուհի Աստուածածին, երկին վեհագոյն... եւ յոգնապտուղ վարուց առաքինութեան. ամէն»:

⁵⁹ «Բանք գովեստից պատմագրաբար յաղագս ծննդեան եւ սննդեան եւ քաղաքավարութեան, եւ վասն փոխման ամենասրբուհոյ եւ փառաւորեալ միշտ կուսին Մարիամու Աստուածածինն, ասացեալ ի նորին ծառայէ եւ մաղթանաց հայցողէ յոգնամեղ մեղաւորէ՝ Գրիգորէ Յեսուացոյ - Զլուսաւոր մարգարիտն, զքարն պատուական...», բ. 55ա-61բ «Նորին Գրիգորի ասացեալ - Բարեբանեալ եւ, ամենասրբուհի Աստուածածին...»:

⁶⁰ Ընդարձակ, ենթավերնագրերով շարադրանք է՝ 268ա-70բ «[Նախաբան] - Ըստ բարուցն բուսոյ բնաւորեալ... ա. 270բ-2բ [Յաղագս Մարիամու] - Եւ արդ, եկեցուք ուստի սկսանելն է արժան... բ. 272բ-6բ Վասն աւետեաց կուսին Մարիամու - Վասն որոյ միում ի պետաց ազդեալ վիհիցն դասուց... գ. 276բ-7ա Ծնունդն Քրիստոսի - Եւ ծնանի յայրին... դ. 277աբ Մկրտութիւնն Քրիստոսի - Բսկ ի լրումն երեսնաթիւ ամաց... ե. 277բ Կատարումն չարչարանացն Քրիստոսի - Բսկ գոր ի ժամ չարչարանաց եւ մահու միածնին... գ. 278աբ Յարութիւն Տեառն - Եւ ընդ ծագել լուսոյն... է. 278բ-9բ Վասն համբարձման Տեառն - Եւ վերացաւ յերկինս... ը. 279բ-99բ Վերափոխումն կուսին - Բսկ ի լնուլ երկոտասան ամաց...»:

⁶¹ Տե՛ս Թամար Մինասեան, Գրիգոր Սկեւոացի. կեանքը եւ գործը, Ատենախօսութիւն, Երեւան, 2008, էջ 55-7 (անտիպ): Այս քսանին պէտք է աւելացնել վերի մեր թուարկման 2-4 միաւորները, ՄՄ 599բ, եւ Երուսաղէմի ձեռ. 1344բ. գործի ամբողջական եւ մասնական 25 օրինակի առկայութիւնը նրա լայն գործածականութեան նշանակ է:

⁶² Տասնմէկը որպէս սկսուածք ունեն մեր 119րդ տողը՝ «Բարեբանեալ եւ ամենասրբուհի Աս-

թիւներ են, եւ միայն հինգն են պարունակում երկի ամբողջութիւնը. ՄՄ 2622, 6615 (երկուսն էլ ԺԸ. դ.) եւ Երուսաղէմի Ս. Յակոբեանց 71, 154Գ, 3575⁶³. գրեթէ բոլորն ունեն չափ 2622ի խորագիրը եւ կառուցուածքը:

Այնուհետեւ պարզուեց, որ մարեմաբան Թ. Տասնապետեանը երկիցս տպագրել է այս բնագրի հատուածներ. նախ Մխիթարեան Վենետիկի չափ 239/222 (238բ-42բ) հիման վրայ եւ Գրիգոր Սկեւոացու անունով տպագրել է «Բարեբանեալ ես...» սկսուածքով կտորը⁶⁴: Երկրորդ անգամ նոյն բնագիրը Երուսաղէմի Ս. Յակոբեանց մատենադարանի՝ 1619 թ. չափ 1344 (էջ 216-86) ձեռագրի հիման վրայ հրատարակել է արդէն Գրիգոր Նարեկացիի անունով⁶⁵: Վերագրման պատճառաբանութիւնը միայն այս է. «...Նարեկացիինը սեպեցինք ներիմացումով: Հիմա հաստատ կը կարծենք որ այս վերջին ճառը իր ամբողջութեան մէջ Նարեկացիի երկն է, համաձայն Ձեռագիր Երուսաղէմ 1344... էջ 216-286-երու մեր ընթերցումին առիթով մեր կատարած պեղումներուն»⁶⁶: «Ներիմացում»ը բանասիրական փաստ չէ, «պեղումներ»ի արդիւնքն էլ հրապարակման մէջ չկայ՝ չի երևում, ուրեմն՝ ի հեճուկս ձեռագրական աւանդոյթի արուած այս վերագրումն անհիմն է, որովհետեւ Երուսաղէմի բազմադաւաղ ձեռագրով արուած այս հրապարակումը Գրիգոր Սկեւոացու ընդարձակ գործի սոսկ վերջին՝ ծրոյց հատուածն է, որ մեզ արդէն ծանօթ է ՄՄ 2622 ձեռագրով՝ «ը. 279բ-99բ Վերափոխումն կուսին - Իսկ ի լնուլ երկոտասան ամաց՝ յետ վերանալոյ Փրկչին, յաւուր միում, մինչդեռ աղօթքը երանուիին ի սենեկի իւրում, երեւեցաւ հրեշտակ Տեառն...»⁶⁷:

Մեր մատենագրութեան մէջ Գրիգորների, Յովհաննէսների, Վարդանների եւ նոյնանուն այլ հեղինակների գործերի շփոթները՝ դեռեւս միջնադարում մէկի

տուածածին...»:

⁶³ Չափ 71բ՝ Դրագարկ, 1321 թ., չափ 154բ՝ Երուսաղէմ, 1737 թ., չափ 3575բ՝ չթուագրուած, նոտրգիր, ԺԷ. կամ ԺԸ. դդ. օրինակուած է երեւի չափ 71ից, որ այս շարքի հնագոյն ձեռագիրն է: մանրամասները տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հ. Ա., Կազմեց Նորայր եպս. Պողարեան. Երուսաղէմ, 1966, 241, 454 եւ նոյնի հտ. Ժ., Երուսաղէմ, 1990, էջ 555:

⁶⁴ Թամար Տասնապետեան, Տիրամայրը, Լիզպոն, 1998, էջ 26-30. սկզբից եւ վերջից աւելի է մեր 119-268 տողերից, որոնց համապատասխանում է էջ 28, տ. 19 - էջ 30, տ. 16:

⁶⁵ Տե՛ս Թամար Տասնապետեան, Գրիգոր Նարեկացիի Տիրամօր Գ. ներբողեանը (Վերափոխման). - «Տաթևի հայագիտական տարեգիրք», 1, Հալէպ, 2008, էջ 59-108 (մեզ հետաքրքրող կտորը՝ էջ 106-108, տ. 3): Այս նոյնն է՝ Թամար Տասնապետեան, Աստուածածին. նոր յղուածներու ժողովածու, Անթիլիաս, 2008, էջ 255-312:

⁶⁶ Նոյն տեղում, էջ 60:

⁶⁷ Տե՛ս նաեւ վերը՝ ծ. 60: Տասնապետեանի տպագրածի սկսուածքն է. «Ի վերափոխումն Տիրամարն Աստուծոյ ի յերկինս - Իսկ ի լնուլ ԲԺ.ան ամաց յետ վերանալոյ Փրկչին՝ մինչդեռ աղաթէր ի սուրբ ի սենեկի իւրում, երեւեցաւ նմա հրեշտակ Տեառն...» (էջ 62): Այս տպագիրները մեր կազմած բնագրի հետ համեմատելն անիմաստ համարեցինք, որովհետեւ գրչական աղաւաղումները, ինչպէս ասացինք եւ ինչպէս երևում է բերուած սկսուածքից, շատ են, ապա՝ բնագիրները տպուած են բաւական անմշակ: Երուսաղէմի 1344 ձեռագրի նկարագրութիւնը տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Դ., Կազմեց Ն. եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1969, էջ 613-5:

աշխատությունը միւսին վերագրելու դեպքերը բաւական առատ են: Այսպիսի կնճիռները պէտք է լուծել ոչ թէ «ներիմացումներով» նոր վերագրումներ անելով, այլ ձեռագրական եւ մատենագրական ճշգրիտ փաստերի վրայ յենուելով: Ըստ այսմ համոզուած ենք, որ Գրիգոր Սկեւոացու այս բնագիրը պէտք է կազմել ամբողջական հինգ օրինակների համեմատութեամբ, հիմք դարձնելով հնագոյն Երուսաղէմի Հ^Կ 71ը (տե՛ս վերը՝ ծ. 63), հրապարակումն օժտելով նաեւ հատուածական օրինակների ձեռագրագիտական-աղբիւրագիտական քննութեամբ⁶⁸:

Դառնանք մեր խնդրին. այս ամէնի հէնքի վրայ ականյայտ դարձաւ, որ Մեծփեցին օգտագործել է ոչ թէ Գրիգոր Սկեւոացու ճառի ամբողջությունը⁶⁹, այլ՝ իր ձեռքին եղած՝ ՄՄ 599 ձեռագրի անվերնագիր բնագիրը, այսինքն՝ գուցէ եւ գործի հեղինակի անունն անգամ չի իմացել: Միով բանիւ՝ կարծում ենք, որ նա ունեցել է սոսկ Յայսմաւորքի համար Աստուածածնի Աւետման նախատօնակին ընթերցուելիք մի շարադրանք ստեղծելու նպատակ, որի համեմատ եւ գրել է 1-118 տողերի մասը⁷⁰ եւ նրան կցել Սկեւոացու գործի իր ձեռքը հասած կտորը: Այս դեպքում եւս, միջնադարին յատուկ սկզբունքով, կարելորդ եղել է ոչ թէ հեղինակի կամ հեղինակութեան, այլ՝ տօնակարգային մեծ կարեւորություն ունեցող իրադարձութեան գործնական-կիրառական՝ ծիսական անհրաժեշտ շարադրանք ունենալու խնդիրը:

Այս եզրայանգումից յետոյ առաւել եւս համոզուեցինք, որ Մեծփեցու գրական վաստակն ըմբռնելու համար ընդհանրապէս պէտք է ելակէտային համարենք նրա վարքագիր Կիրակոս Բանասէր վարդապետի հետեւեալ հաղորդումը. «Զի եւս զստոյգն եւ զճշմարիտն ի բերանոյ սուրբ հօրն լսեցի, թէ՛ «Զինչ որ ի Ժամատեղս կարգեալ եմ, զմինն ի յիսանէ ոչ եղեալ եմ, այլ յառաջին սուրբ հարցն եմ առեալ եւ եղեալ ի գիրս»⁷¹: Գուցէ թուայ, թէ այս հաղորդումը կարող է վերաբերել առաւելապէս Աղօթամատոյցի կամ Ժամագրքի նրա խմբագրմանը եւ ընդհանրապէս ծիսական գործերին (որպիսին է նաեւ մեր խնդրոյ առարկայ ճառը), բայց յստակ նկատել ենք, որ կացութիւնը նոյնն է նաեւ Մեծփեցու

⁶⁸ Թամար Մինասեանը, որ, ինպէս ասացինք՝ իր մենագրութեան մէջ պարզել է Սկեւոացու երկի ձեռագրական պատկերը, արդէն սկսել է այս բնագրի պատրաստումը: Բ դէպ, մեր 2622 ձեռագիրը բաւական ուշ՝ ԺԸ դ. գրչութիւն է, սակայն որպէս փորձ այն համեմատեցինք Թ. Տասնապետեանի տպագրածի (Երուսաղէմի Հ^Կ 1344ի) հետ եւ համոզուեցինք, որ առաջինը լաւ հիմքից արուած խնամքոտ օրինակութիւն է, իսկ երկրորդը լի է 1619 թ. Տիրիկի Արմուտթաղ գիւղում մահտեսի Բարսեղ անհմուտ գրչի արած բազմաթիւ անմիտ աղաւաղումներով, որպիսիք գիտական բնագիրը կազմելիս երեւի պէտք է անտեսել:

⁶⁹ Երեւի ծանօթ չի եղել նաեւ իր օրերին եւ իր միջավայրում՝ 1406 թ. Նկարինայ անապատում գրուած ՄՄ 1521 ձեռագրի ճառընտրային տարբերակին, որը նոյնպէս նման չէ իր օգտագործածին:

⁷⁰ Սկեւոացու երկի ամբողջ շարադրանքը (ձեռ. 2622, 268ա-99բ) կարդացինք, սակայն Մեծփեցու ճառի առաջին կէսի հետ նմանութիւն չգտանք, այսուհանդերձ, այս մասի համար եւս այլ աղբիւր ունեցած լինելու հնարաւորութիւնը չենք բացառում:

⁷¹ **Մեծփեցի**, Պատմագրութիւն, էջ 284:

ուսումնական-դասագրքային երկերում, որոնց մեջ շատ յաճախ դրուած են այլոց գործերի ամբողջական կտորներ⁷²:

Շատ աւելի կարելոր է, որ այս ճառ-ներբողի գիտով առարկայօրէն հաստատուում է Մեծոփեցու աշակերտ-վարքագիր Կիրակոս Բանասէրի հետեւեալ հաղորդումը. «Եւ ասաց սուրբ վարդապետս մեր, թէ պարտ է Աւետեաց Աստուածածնին Բ. (2) օր տօն կատարել, ի յԱպրիլ ի Զ. (6) եւ ի Նիսան ի ԺԶ. (16) նախատօնակ առնել, եւ Ապրիլ ի Է. (7) եւ ի Նիսան ի ԺԷ. (17) տօն Աւետեաց Աստուածածնին կատարել՝ մինն վասն երկնաւորաց եւ մինն վասն երկրաւորաց»⁷³, այսինքն՝ Նախատօնակը երկնաւորների համար է. այս ոգով, ոճով եւ նպատակադրմամբ էլ գրուած է ճառի առաջին մասը, որն ըստ մեր ունեցած նիւթի՝ Մեծոփեցին ինքն է յօրինել (երկրորդի նման՝ ուրիշից պատրաստի չի առել):

Այսուհետեւ՝ մեր ծիսական գրականութեան հետագայ ուսումնասիրութեան խնդիրից մէկն է դառնում պարզումն այն հարցի, թէ Մեծոփեցու ծիսական այս նորամուծութիւնն ի՞նչ ընդունելութիւն եւ տարածում է ստացել, սահմանափակուել է նորայայտ բնագրի ձեռագրերի մեծ մասի ստեղծման վասպուրականեան միջավայրով, թէ՞ աւելի լայն աշխարհագրական ընդգրկում է ունեցել:

Այսպիսով, բնագրիս 118-268 հատուածները համեմատուած են եւս երեք ձեռագրի հետ.

Հ. Հ^ր 599. 91բ-3բ. ԺԴ. դ. կէս. գրչութեան ելակէտային տուեալները՝ անյայտ:

Զ. Հ^ր 1521. 423ա-5ա. ՊԾԵ. - 1406 թ., Նկարինայ ուխտ, գրիչ՝ Գրիգոր վրդ., ստացողը՝ Ստեփանոս եւ Թումայ արեղայք, ի վայելումն՝ Յոհաննոս Նկարինայ եպս.-ի (միայն 118-193 տողերը):

Ղ. Հ^ր 2622. 298բ¹, տ. 15 - 299բ¹, տ. 21:

Մեծոփեցու խմբագրական աշխատանքը երեւում է, բնականաբար, այս մասի յայտնաւորային (մեծոփեցիական) եւ սկեւոագիական (ո՛չ յայտնաւորային ՀԶՂ օրինակների) բովանդակային տարբերութիւնների զուգադրումով, ըստ որի նրա խմբագրում դրսեւորուած է հետեւեալ չորս տեղիներում.

⁷² Դասաւանդման միջնադարեան եղանակները լաւ պատկերացնելու համար շատ ուշագրաւ է այն փաստը, որ Մեծոփեցին 1426 թ. Երզ Երզոց է դասաւանդել Գրիգոր Նարեկացու եւ Վարդան Արեւելցու մեկնութիւնների զուգորդումով եւ առ այդ Նարեկացու երկի Երուսաղէմի Հ^ր 1225 ձեռագրի մէջ գրել է. «ՊԶԵ. (1426) թվ. դասիս կարդացի հետ Վարդանայ մեկնչին եւ զարմանալի տեսայ զմիտք սորին. Քրիստոս Աստուած ողորմի Թովմա վարդապետին եւ իւր ծնողացն. ամէն». տե՛ս Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց, հտ. Դ., Կազմեց Ն. եպս. Պողարեան, Երուսաղէմ, 1969, էջ 366, հմմտ ԺԵ. Ա., Հ^ր 376, էջ 355 եւ ԺԵ. Գ., Հ^ր 491, էջ 367:

⁷³ Պատճառաբանութիւնն այս է՝ «գի Բ. (2) հետ աւետիք ետ Գաբրիէլ հրեշտակապետն կուսին Մարիամու Աստուածածնին, զմինն ի Գ. (3) Ժամն՝ ի վերայ աղբերն, եւ զմինն ի Զ. (6) Ժամն՝ ի սենեկին». տե՛ս Մեծոփեցի, Պատմագրութիւն, էջ 283:

Մեծութեցի	Սկեւռացի՝ ՀԶՂ
127 Երկիր՝ յորմէ արդարութիւն եւ ճշմարտութիւն բուսաւ	127 Երկիր՝ ուստի ճշմարտութիւն (Ձ ճշմարտութիւնն) բուսաւ
154 Գուշակելոցն լրումն	154 Գուշակելոցն լրումն ՀԶ + աւրինացն աւարտող, Ղ + օրինացն աւարտող
159 Աւրինացն նորոգութիւն.	159 ՁՂ Աւրինակացն (Ղ օրինականացն) նորոգութիւն
267 Եւ ամենեցուն առ հասարակ նորմութիւն	267 ՀՂ Եւ ամենեցուն առ հասարակ խաղաղութիւն

Բնչպէս տեսնում ենք, շատ չի միջամտել եւ գործածած բնագրի դիմագիծն էականօրէն չի փոխել. մի տեղ (127) աւելացրել է «արդարութիւն եւ» բառերը, մի տեղ (154) զեղչել է «աւրինացն աւարտող» դարձուածը, երրորդում (159) «աւրինակացն (օրինականացն)» բառը դարձրել է «աւրինացն», վերջինում (267)՝ «խաղաղութիւն» բառի փոխարէն գրել է «նորմութիւն»:

Բսկ հետեւեալները Մեծութեցու հիմք Հ¹ 599 (Հ) մասնական ձեռագրի եւ Սկեւռացու գործի ամբողջական օրինակի (Ղ) տարբերութիւններով պայմանաւորուած խտտորումներ են.

Մեծութեցի	Սկեւռացի՝ Ղ
121 Արեւելք, ուստի արդարութեան արեգակն ծագեցաւ	121 Արեւելք, ուստի արդարութեան արեգակն ծագեցաւ, արեգակն յորմէ արարածք պայծառացան
204 յոգիսն արդարոց	204 յոգիսն արդարոց կատարելոց
248 կենարար եւ մեղսաքաւիչ արեան Տեառն.	248 կենարար եւ մեղսաքաւիչ մարմնոյ եւ արեան Տեառն
262 պատերազմել ընդդէմ հակառակաց	262 պատերազմել ընդդէմ հակառակաց ճշմարտութեանն
263 Դատաւորաց՝ արդարութիւն	263 Դատաւորաց՝ արդարութեամբ դատել առանց ակնառութեան եւ կաշառաց
264 Ժողովրդականաց՝ ունկնդրութիւն	264 Ժողովրդականաց՝ ունկնդրութիւն եւ հրահանգութիւն պատուիրանացն Աստուծոյ եւ ամենայն բարեգործութիւնս առաջադիմութիւն
265 Մեղուցելոց՝ զղջումն.	265 Մեղուցելոց՝ զղջումն եւ դարձապաշխարութեան
266 Արդարոց՝ զարութիւն.	266 Արդարոց՝ զարութիւն, պատուիրանապահութիւն

Վերջապէս, 2 օրինակի՝ 120րդ տողին յաջորդող «բնակեցաւ + աթոռ բարձրագոյն յորում Աստուած բազմեցաւ» ընթերցումը ճառընտրային յաւելում է:

